[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
20	Դեկտեմբեր	2018 թ.		Բ	1733533976
[4] Մատուցման ամսաթիվը					
10	Դեկտեմբեր	2018 թ.		Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Դատաավտոտեխնիկական փորձաքննություն,փորձագետի եզրակացություն 000101-18,քրեական գործ 66103118

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 1 2 8 5 4 6 8
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[10] Անվանումը	«ԴԱՏԱԳԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)
[11] Բանկային տվյալները	Ամերիաբանկ ՓԲԸ N 1570048462240100
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ԹԱՂԱՄԱՍ ՇՐՋԱՆԱՅԻՆ Փ. 2/2 409 ա.
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն N 900011000834
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[19] Լրացուցիչ տվյալներ	
[20] Ռեմ միջոցով	Անուն, ազգանուն
	Լիազորագիր — Համար
	Լիազորագիր — Ամսաթիվ

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

NN Հ/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ժամանակաշրջանը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Դատաավտոտեխնիկական փորձաքննություն	հատ	1	25000		25000
Ընդամենը						25000

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ HARUTYUNYAN PARGEV 3307860070

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրություն, անուն, ազգանուն)

20/12/2018 10:36:44

ՈՐՈՇՈՒՄ

փորձագետ ճանաչելու և փորձագիտական հիմնարկից դուրս դատաավտոտեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին

28 նոյեմբեր 2018թ. **ք. Չարենցավան**

ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Ա. Ս. Իսկանդարյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 66103118 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

2018 թվականի սեպտեմբերի 30-ին ժամը 02.50-ի սահմաններում, Երևան քաղաքի Ծ. Իսակովի պողոտայի 50/7 շենքի 12-րդ բնակարանի բնակիչ, 24.12.1989թ. ծնված Ղարիբ Շահենի Մանուկյանը, իր կողմից վարած «Լեքսուս» մակնիշի 35 RX 380 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով դեպի Երևան քաղաքի ուղղությամբ երթևեկելիս, Երևան-Սևան ավտոճանապարհի 33 կմ հատվածում, դուրս է եկել ճանապարհի երթևեկելի հատվածից, բախվել ճանապարհի աջ հատվածում գտնվող ծառին, այնուհետև շարունակելով ընթացքը՝ կանգ է առել ճանապարհի երթևեկելի հատվածում:

Ավտովթարի հետևանքով «Լեքսուս» մակնիշի 35 RX 380 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի ուղևոր՝ 11.03.1988թ. ծնված Վահագն Ռոբերտի Ջագինյանը մահացել է:

Փաստի առթիվ 30.09.2018թ. Չարենցավանի քննչական բաժնում հարուցվել է թիվ 66103118 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով: Վահագն Ռոբերտի Ջագինյանը ճանաչվել է տուժող:

Քրեական գործի նախաքննությամբ ձեռք են բերվել հետևյալ.

ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ՝

Դեպքը տեղի է ունեցել 2018 թվականի սեպտեմբերի 30-ին ժամը 02.50-ի սահմաններում, Երևան-Սևան ավտոճանապարհի 33 կմ հատվածում, որը գտնվում է բնակավայրի սահմաններից դուրս: Ճանապարհն ասֆալտապատ է, հարթ, գտնվում է չոր վիճակում, տեսանելիությունը՝ բավարար: Ճանապարհի երթևեկելի ուղեմասի լայնությունը կազմում է 7.4 մետր, որը ընդհատվող գծանշուններով բաժանված է երկու հավասար՝ 3.7 մետր լայնությամբ երթևեկելի ուղեմասերի: Դեպի Երևան քաղաք տանող ուղեմասի ձախ կողմում առկա է 0.8 մետր լայնությամբ ասֆալտապատ կողնակ, որից ձախ գտնվում է 3.7 մետր լայնությամբ կանաչապատ գոտի: Ճանապարհի աջ կողմում առկա է 2.5 մետր լայնությամբ ասֆալտապատ կողնակ, իսկ դրանից աջ՝ հողածածկ տարածք: Ճանապարհային նշանները բացակայում են:

«Լեքսուս» մակնիշի 35 RX 380 հաշվառման համարանիշի ավտոմեքենան գտնվում է ճանապարհի երթևեկելի աջ հատվածում՝ հետևի հատվածով դեպի Երևան քաղաքի ուղղությամբ: Ավտոմեքենայի առջևի ձախ անվադողը գտնվում է ճանապարհի աջ հոծ գծի վրա, հետևի ձախ անվադողը ճանապարհի աջ կողնակի աջ եզրից գտնվում է 2 մետր հեռավորության վրա դեպի ձախ: Ավտոմեքենայի առջևի աջ անվադողը ճանապարհի ձախ հոծ գծից գտնվում է 6.1 մետր հեռավորության վրա դեպի աջ, իսկ հետևի աջ անվադողը նույն հոծ գծից գտնվում է 6.7 մետր հեռավորության վրա դեպի աջ:

«Լեքսուս» մակնիշի 35 RX 380 հաշվառման համարանիշի ավտոմեքենայից 10.5 մետր հեռավորության վրա դեպի Սևան քաղաքի ուղղությամբ, ճանապարհի աջ կողնակից աջ գտնվող հողային հատվածում առկա է անվադողի հետք, որը սկիզբ է առնում աջ կողնակի աջ եզրից, ունի 7.4 մետր երկարություն, ավարտվում է աջ կողնակի աջ եզրից 1.1 մետր հեռավորության վրա դեպի աջ:

«Լեքսուս» մակնիշի 35 RX 380 հաշվառման համարանիշի ավտոմեքենայից 30.6 մետր հեռավորության վրա դեպի Սևան քաղաքի ուղղությամբ, ճանապարհի աջ կողնակի աջ եզրից 3.3 մետր հեռավորության վրա առկա է ծառ, որի վրա մինչև 1.75 մետր բարձրության վրա առկա են վնասվածքի հետքեր:

Ճանապարհի երթևեկելի աջ հատվածում առկա են ծառից պոկված կտորներ: «Լեքսուս» մակնիշի 35 RX 380 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի դիմացի հատվածից մինչև 10.5 մետր հեռավորության վրա, աջ կողնակում առկա են քսվածքի հետքեր, որոնք ուղղված են դեպի հողային հատվածը: «Լեքսուս» մակնիշի 35 RX 380 հաշվառման համարանիշի ավտոմեքենայից 15.6 մետր հեռավորության վրա դեպի Սևան քաղաքի ուղղությամբ, ճանապարհի աջ կողնակի աջ եզրին առկա է 1.2 մետր երկարությամբ քսվածքի հետք: Ծառին հարակից հատվածում, աջ կողնակի աջ եզրից 2 մետր հեռավորության վրա դեպի աջ առկա է անվադողի քսվածքի հետք, որը գտնվում է դեպի Սևան քաղաքի ուղղությամբ, ունի 17.3 մետր երկարություն, ավարտվում է աջ կողնակի աջ եզրին:

Նախաքննությամբ պարզվել է, որ ավտովթարի հետևանքով վնասվածքներ են ստացել «Լեքսուս» մակնիշի 35 RX 380 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վարորդ Ղարիբ Մանուկյանը, ուղևորներ՝ Գևորգ Մանուկյանը, Գնել Մանուկյանը և Սարգիս Ջուլհակյանը:

Գևորգ Մանուկյանի ցուցմունքի համաձայն. 2018 թվականի սեպտեմբերի 30-ին ժամը 17.00-ի սահմաններում իրենց տուն են այցելել մորեղբոր որդին՝ Ղարիբ Մանուկյանը և նրա մորեղբոր որդին՝ Վահագն Ջագինյանը: Միասին հաց են կերել և կոնյակ խմել: Ղարիբը խմել է երկու կամ երեք բաժակ կոնյակ: Քանի որ ինքը և եղբայրը՝ Գնելը պետք է առավոտյան մեկնեին Երևան քաղաք՝ ավտոպահեստամասեր գնելու նպատակով, իսկ Ղարիբը և Վահագնը այդ օրը վերադառնալու էին Երևան քաղաք, որոշել են նրանց հետ գնալ: Իրենց է միացել նաև քրոջ ամուսինը՝ Սարգիս Ջուլհակյանը և նույն օրը ժամը 23.00-ի սահմաններում ինքը, եղբայրը, Սարգիսը, Վահագնը և Ղարիբը, վերջինի «Լեքսուս» մակնիշի ավտոմեքենայով իրենց գյուղից ուղևորվել են դեպի Երևան քաղաք: Ավտոմեքենան վարել է Ղարիբը, Սարգիսը նստել է վարորդի կողքի նստատեղին, ինքը նստել է հետևի նստատեղի կենտրոնական հատվածում, իրենից ձախ նստել է եղբայրը, իսկ աջ՝ Վահագնը: Դրսում մութ է եղել, եղանակը՝ պարզ, ասֆալտը՝ չոր, Ղարիբն ավտոմեքենան վարել է լույսերը միացրած վիճակում, սակայն չի նկատել, մոտակա լույսերն են միացված եղել, թե՝ հեռահար, ուշադրություն չի դարձրել նաև, թե կոնկրետ ինչ արագությամբ է վարել ավտոմեքենան: Իր կարծիքով ավտոմեքենան վարել է 90-100 կմ/ժ արագությամբ: Երթևեկել են մեկ առաջին երթևեկելի գոտիով, մեկ՝ երկրորդ: Երևան-Սևան ավտոճանապարհին, Չարենցավան քաղաքին չհասած, երթևեկել են ճանապարհի երթևեկելի ձախ գոտիով, իրենցից մոտ 300 մետր հեռավորության վրա նկատել է համընթաց երթևեկող բեռնատար ավտոմեքենա: Ավտոմեքենայի մակնիշը և համարանիշը չի նկատել, ավտոմեքենայի չափերից հասկացել է, որ բեռնատար է: Երբ մոտեցել են ճանապարհի երթևեկելի նույն գոտիով ընթացող այդ ավտոմեքենային: Ղարիբը լույսերով ազդանշան է տվել, որպեսզի բեռնատարն անցնի ճանապարհի աջ գոտի, սակայն այն շարունակել է ընթանալ նույն գոտիով, որից հետո, երբ բեռնատարից գտնվել են մոտ 50 մետր հեռավորության վրա, Ղարիբը կտրուկ թեքվել է աջ, որից հետո իրենց ավտոմեքենան սկսել է սահել: Հասկանալով, որ վթարի են ենթարկվելու, գրկել է

եղբորը և չի նկատել, թե ինչ է կատարվել: Կանգ առնելուց հետո դուրս են եկել ավտոմեքենայից և նկատել, որ Վահագնը ավտոմեքենայի մեջ անշարժ պառկած է և նրան դուրս հանեցինք ավտոմեքենայից: Քիչ անց եկան շտապօգնության աշխատակիցները, ովքեր Ղարիբին և Վահագնին տեղափոխեցին Երևան քաղաք:

Գնել Մանուկյանը տվել է նույնաբովանդակ ցուցմունք, սակայն հայտնել է, որ ճանապարհին քնել է ավտոմեքենայի մեջ և դեպքին ականատես չի եղել:

Սարգիս Ջուլհակյանի ցուցմունքի համաձայն. 2018 թվականի սեպտեմբերի 29-ին կեսօրին իրեն է զանգահարել աներորդին՝ Գևորգ Մանուկյանը և խնդրել, որ օգնի ավտոմեքենան վերանորոգեն: Այդ օրը ժամը 18.00-ի սահմաններում գնացել է Գևորգենց տուն, որտեղ են գտնվել Գևորգի բարեկամները՝ Ղարիբը և Վահագնը: Միասին հաց են կերել և խմել: Քիչ անց Ղարիբը, Վահագնը, Գևորգը և վերջինի եղբայրը՝ Գնելը գնացել են իրենց գյուղում բնակվող բարեկամներին տեսնելու, իսկ ինքը մնացել է աներոջ տանը: Մի քանի ժամ անց վերադառնալուց հետո Գևորգն ասել է, որ Ղարիբը և Վահագնը վերադառնալու են Երևան քաղաք և առաջարկել է, որ իրենք էլ գնան նրանց հետ՝ ավտոմեքենայի համար պահեստամաս գնելու նպատակով: Ժամը 23.00-ի սահմաններում Ղարիբի ավտոմեքենայով ուղևորվել են դեպի Երևան քաղաք: Ավտոմեքենան վարել է Ղարիբը, ինքը նստել է նրա կողքի նստատեղին, իր հետևի նստատեղին նստել է Վահագնը, նրանից ձախ՝ Գևորգը, իսկ հետևի ձախ նստատեղին՝ Գնելը: Դրսում մութ է եղել, եղանակը՝ պարզ, ասֆալտը՝ չոր: Ղարիբն ավտոմեքենան վարել է նորմալ արագությամբ՝ լույսերը միացրած վիճակում: Ահագին ճանապարհ անցնելուց հետո, Ղարիբն ավտոմեքենան վարել է երթևեկելի ձախ գոտիով: Այդ ժամանակ իրենցից մոտ 100 մետր հեռավորության վրա նկատել է, որ նույն երթևեկելի գոտիով համընթաց երթևեկում է բեռնատար մի ավտոմեքենա, որի մակնիշը և համարանիշը չի նկատել: Ղարիբն ընթացել է նորմալ արագությամբ, սակայն կոնկրետ արագությունը չի տեսել: Նա շարունակել է երթևեկել նույն երթևեկելի գոտիով՝ միաժամանակ լույսերով ազդանշան տալով բեռնատարի վարորդին, որ ճանապարհը զիջի և վազանց կատարեն: Բեռնատար ավտոմեքենան շարունակել է ընթանալ նույն գոտիով, երբ արդեն մոտեցել են այդ ավտոմեքենային և իրենց հեռավորությունը կազմել է մոտ 30 մետր, Ղարիբը կտրուկ թեքվել է դեպի աջ՝ դեպի երթևեկելի աջ գոտի: Այդ ժամանակ բեռնատար ավտոմեքենան նույնպես սկսել է գնալ դեպի աջ: Երբ Ղարիբն սկսել է երթևեկել դեպի աջ, ավտոմեքենան դարձել է անկառավարելի և սկսել են սահել: Դրանից հետո հիշել է, որ գտնվել է ավտոմեքենայի մոտ կանգնած, ավտոմեքենան գտնվել է վնասված վիճակում, որից հասկացել է, որ վթարվել են: Պատահական ավտոմեքենայով վերադարձել է տուն, իսկ մի քանի ժամ անց աջ ուսի շրջանում ցավեր է զգացել, որից հասկացել է, որ վնասվածք է ստացել և դիմել է «Դիլիջան» բժշկական կենտրոն: Հետագայում իմացել է, որ վթարի հետևանքով Վահագնը մահացել է:

2018 թվականի հոկտեմբերի 9-ին որոշում է կայացվել Ղարիբ Մանուկյանի նկատմամբ որպես խափանման միջոց՝ ստորագրություն չհեռանալու մասին կիրառելու վերաբերյալ: 2018 թվականի հոկտեմբերի 15-ին որոշում է կայացվել Ղարիբ Մանուկյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին: Վերջինը ցուցմունք է տվել այն մասին, որ «ԲՀ» կարգի վարորդ է, ունի 11 տարվա վարորդական ստաժ: Վարել է իրեն պատկանող «Լեքսուս» մակնիշի 35 RX 380 հաշվառման համարանիշի ավտոմեքենան: Ավտոմեքենան գտնվել է տեխնիկապես սարքին վիճակում, որևէ խնդիր չի ունեցել, ինքը հաճախակի ստուգել է ավտոմեքենայի սարքինությունը: Վահագն Ջագինյանը հանդիսացել է իր հեռավոր ազգականը, բնակվել են նույն շենքում, իրար հետ գտնվել են շատ լավ հարաբերությունների մեջ: 2018 թվականի սեպտեմբերի 29-ին ինքը և Վահագնը իր ավտոմեքենայով Երևան քաղաքից ուղևորվել են Գեղարքունիքի մարզի Այգուտ գյուղ՝ տատիկին տեսակցելու: Տատիկին տեսակցելուց հետո այցելել են իր

ազգական Գևորգ Մանուկյանի տուն, որտեղ հաց են կերել և կոնյակ խմել: Դրանից հետո այցելել են նաև նույն գյուղում բնակվող մյուս ազգականներին: Նույն օրը ժամը 23.00-ի սահմաններում Այգուտ գյուղից ուղևորվել են դեպի Երևան քաղաք: Իրենց հետ Երևան քաղաք են ուղևորվել նաև Գևորգը, նրա եղբայրը՝ Գնելը և նրանց փեսան՝ Սարգիսը: Ավտոմեքենան վարել է ինքը, իր կողքի նստատեղին նստել է Սարգիսը, իր հետևի նստատեղին նստել է Գնելը, նրա աջ կողքին՝ Գևորգը, իսկ հետևի աջ նստատեղին, պատուհանի մոտ նստել է Վահագնը: Դրսում մութ է եղել, եղանակը՝ պարզ, ասֆալտը՝ չոր, ավտոմեքենան Երևան-Սևան ավտոճանապարհով վարել է մոտակա լույսերը միացրած վիճակում: Սևան քաղաքի մոտ գտնվող ճանապարհահատվածին տեղակայված ոստիկանության հենակետն անցնելուց հետո շարունակել է երթևեկությունը, հիմնականում ավտոմեքենան վարել է 80-100 կմ/ժ արագությամբ: Դրանից հետո, երբ ավտոմեքենաս վարել է ճանապարհի երթևեկելի ձախ հատվածով, իրենից մոտ 200 մետր հեռավորության վրա նկատել է, որ երթևեկելի ձախ հատվածով համընթաց ընթանում է բեռնատար մի ավտոմեքենա, որի մակնիշը և համարանիշը չի նկատել: Նկատելով այդ ավտոմեքենան և շարունակելով ընթանալ նույն երթևեկելի գոտիով՝ սկսել է հեռահար լույսերը միացնել-անջատելով ազդանշան տալ, որպեսզի այդ բեռնատարն անցնի երթևեկելի աջ գոտի և ճանապարհն ազատի: Երբ արդեն մոտեցել է բեռնատարին, իրենց հեռավորությունը եղել է մոտ 50 մետր, ինքն, առանց արգելակելու, ղեկը կտրուկ թեքել է աջ, որպեսզի մտնի երթևեկելի աջ գոտի: Այդ ժամանակ բեռնատարը նույնպես ցանկացել է անցնել երթևեկելի աջ գոտի: Երբ ինքը երթևեկելի ձախ գոտուց թեքվել է դեպի երթևեկելի աջ գոտի, ավտոմեքենան դարձել է անկառավարելի, այլևս չի կարողացել այն վարել, այնուհետև ոչինչ չի հիշել: «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում գտնվելու ժամանակ իմացել է, որ ենթարկվել են վթարի, ավտոմեքենան բախվել է ճանապարհի աջ կողմում գտնվող ծառերից մեկին: Մի քանի օր անց իմացել է, որ Վահագնը մահացել է:

Ղարիբ Մանուկյանից վերցվել է արյան նմուշ, որոշում է կայացվել դատաքիմիական փորձաքննություն:

Համաձայն դատաքիմիական փորձաքննության թիվ 494 եզրակացության. փորձաքննությանը ներկայացված Ղարիբ Մանուկյանի արյան փորձանմուշում հայտնաբերվել է 1.08 տոկոս ալկոհոլ:

Նկատի ունենալով, որ քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել պարզելու մի շարք հարցեր, որոնց լուծման համար անհրաժեշտ է ավտոտեխնիկական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-246 և 248 հոդվածների պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 66103118 քրեական գործով «Դատական փորձաքննությունների ինստիտուտ» ՍՊԸ-ի տնօրեն Պարգև Արծրունի Հարությունյանին /ծնված 23.07.1986թ., ում ՀՀ արդարադատության նախարարության դատական փորձագետի որակավորման հանձնաժողովի կողմից 01.06.2012թ. որոշմամբ շնորհվել է «Ճանապարհատրանսպորտային պատահարի հանգամանքների հետազոտություն» մասնագիտությամբ, իսկ 28.06.2013թ. որոշմամբ շնորհվել է «Տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակի, տրանսպորտային հետքաբանական հետազոտություն» դատական փորձագետի որակավորում/ ճանաչել փորձագետ:

2. Նշանակել փորձագիտական հիմնարկից դուրս դատաավտոտեխնիկական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել փորձագետ Պարգև Արծրունի Հարությունյանին:

3.Պարզաբանման համար փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը.

ա. «Լեքսուս» մակնիշի 35 RX 380 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի ղեկային կառավարումը, արգելակային համակարգը, կախոցները և անիվները գտնվում են սարքին վիճակում, թե՝ ոչ: Եթե առկա են անսարքություններ, ապա դրանք ինչի հետևանքով և երբ են առաջացել, վարորդի կողմից հայտնաբերման ենթակա եղել են, թե՝ ոչ:

բ. եթե առկա են անսարքություններ, ապա այդ անսարքությունների և տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարի առաջացման միջև տեխնիկապես պատճառական կապ կա, թե՝ ոչ:

գ. նշված ճանապարհատրանսպորտային իրադրությունում «Լեքսուս» մակնիշի 35 RX 380 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վարորդի կողմից ՃԵԿ-ի պահանջներին հակասող գործողություններ թույլ տրվել են, թե՝ ոչ, եթե այո, ապա ինչպիսի, դրանք ավտովթարի հետ պատճառական կապի մեջ գտնվում են, թե՝ ոչ:

դ. նշված իրադրությունում «Լեքսուս» մակնիշի 35 RX 380 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վարորդը ավտովթարը կանխելու տեխնիկական հնարավորություն ունեցել է, թե՝ ոչ, եթե ունեցել է, ապա ինչպիսի գործողություններ պետք է կատարեր, որոնք չի կատարել:

3. Եթե փորձաքննության ընթացքում կառաջանան այլ հարցեր, որոնք որոշմամբ չեն առաջադրվել, ապա խնդրում եմ պատասխանել նաև այդ հարցերին:

4. «Լեքսուս» մակնիշի 35 RX 380 հաշվառման համարանիշի ավտոմեքենան գտնվում է ՀՀ ոստիկանության Չարենցավանի բաժնի տուգանային հրապարակում:

5. Փորձագետներին տրամադրել թիվ 66103118 քրեական գործը:

Կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 249-րդ հոդվածի պահանջները, փորձագետին բացատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով սահմանված քրեական պատասխանատվության մասին:

Կոտայքի մարզային քննչական վարչության
հատկապես կարևոր գործերով քննիչ **Ա. Ս. Իսկանդարյան**